Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԱՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 941-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) հավելվածը 52-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 53-րդ կետով.

«	53.	3926	Խնձորի այգու հակակարկտային համակարգի ցանց՝ սև գույնի, մեկթելանի 0,32 Հ = 3,60	կգ	690	ԵՄ/ Իտալիա	2 601 000	».

2) «Ընդամենը» պարբերության մեջ «64 460 000» թիվը փոխարինել «67 061 000» թվով: